Հավելված N 361
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.-ի հուլիսի 26-ի
N 636-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի (այսուհետ՝ Գրասենյակ) ապրանքային նշանների և աշխարհագրական նշումների փորձաքննության բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ (ծածկագիրը՝ 23-Գ34.1-18.2-Մ4-2)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս ավագ մասնագետը կամ Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.4 Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Իրականացում է ազգային ընթացակարգով ապրանքային նշանների գրանցման համար ներկայացված փաստաթղթերի օրենսդրությամբ սահմանված պահանջներին՝ դրանք որպես ապրանքային նշանի գրանցման հայտ ընդունելու համար, համապատասխանության ստուգման, աշխարհագրական նշումների և ծագման տեղանունների գրանցման և (կամ) օգտագործման իրավունք տալու, ինչպես նաև երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման համար ներկայացված փաստաթղթերի օրենսդրությամբ սահմանված պահանջներին՝ դրանք որպես աշխարհագրական նշման, ծագման տեղանվան, երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման հայտ ընդունելու համար համապատասխանության ստուգման, հայտերի գրանցման և հայտի տվյալները համապատասխանաբար ապրանքային նշանների հայտերի հիմնապաշար կամ աշխարհագրական նշումների հայտերի հիմնապաշար կամ ծագման տեղանունների հայտերի հիմնապաշար կամ երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերի հիմնապաշար մուտքագրման աշխատանքները,

2. Իրականացում է ազգային ընթացակարգով ներկայացված ապրանքային նշանների հայտերի նախնական փորձաքննությունը, ինչպես նաև աշխարհագրական նշումների,

ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերի փորձաքննությունը,

3. Մասնակցում է ազգային ընթացակարգով ներկայացված ապրանքային նշանների հայտերի նախնական փորձաքննության, ինչպես նաև աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերի փորձաքննության արդյունքների հիման վրա համապատասխան ծանուցումների կամ որոշումների նախապատրաստման հետ կապված աշխատանքներին,

4. Մասնակցում է ազգային ընթացակարգով ստացված ապրանքային նշանների հայտերը, ինչպես նաև աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերը հրապարակման հետ կապված աշխատանքներին,

5. Մասնակցում է ազգային ընթացակարգով ստացված ապրանքային նշանների հայտերի, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի ըստ էության փորձաքննությանը,

6. Մասնակցում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրոյից (այսուհետ՝ Միջազգային բյուրո) ստացված միջազգային գրանցումների մասին ծանուցումների (այսուհետ՝ միջազգային գրանցումների ծանուցում) փորձաքննությանը,

7. Իրականացնում է Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) ապրանքային նշանների և Միության ապրանքի ծագման տեղանունների հայտերի գրանցումը,

8. Մասնակցում է Միության ապրանքային նշանների և Միության ապրանքի ծագման տեղանունների հայտերի նախնական փորձաքննությանը,

9. Նախապատրաստում է Միության ապրանքային նշանների և Միության ապրանքի ծագման տեղանունների հայտերի նախնական փորձաքննության արդյունքների հիման վրա ծանուցումների կամ որոշումների նախագծերը,

10. Մասնակցում է իրավաբանական և ֆիզիկական անձանցից ստացված ապրանքային նշաններին, աշխարհագրական նշումներին, ծագման տեղանուններին և երաշխավորված ավանդական արտադրանքին, Միության ապրանքային նշաններին (սպասարկման նշանների) և Միության ապրանքի ծագման տեղանվանը վերաբերող դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկմանը, ինչպես նաև պատասխանների, պարզաբանումների տրամադրման աշխատանքների իրականացմանը:

Իրավունքները՝

• Գրասենյակի համապատասխան ստորաբաժանումից ստանալ ազգային ընթացակարգով ներկայացված ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման հայտերը, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթեր և այլ նյութեր,

• ազգային ընթացակարգով ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների և ծագման տեղանունների գրանցման և (կամ) օգտագործման իրավունք տալու, ինչպես նաև երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման համար ստացված

փաստաթղթերի օրենսդրությամբ սահմանված պահանջներին անհամապատասխանության դեպքում իրավունք ունի պահանջել հայտատուից վերացնել ի հայտ եկած անհամապատասխանությունները,

• ստանալ համապատասխան տեղեկատվություն ազգային ընթացակարգով ստացված ապրանքային նշանների հայտերը, ինչպես նաև աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերը հրապարակման հետ կապված աշխատանքների վերաբերյալ,

• ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը իրավաբանական և ֆիզիկական անձանցից ստացված ապրանքային նշաններին, աշխարհագրական նշումներին, ծագման տեղանուններին և երաշխավորված ավանդական արտադրանքին վերաբերող դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկման, ինչպես նաև պատասխանների, պարզաբանումների տրամադրման աշխատանքների վերաբերյալ,

• Հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվությունը տեղեկանքների, հաշվետվությունների և այլ գրությունների նախապատրաստման համար:

Պարտականությունները՝

• օրենքով սահմանված ժամկետում անցկացնել ազգային ընթացակարգով ապրանքային գրանցման համար ստացված փաստաթղթերի համապատասխանության ստուգումը օրենսդրությամբ սահմանված պահանջներին՝ դրանք որպես ապրանքային նշանի գրանցման հայտ ընդունելու համար, աշխարհագրական նշումների և ծագման տեղանունների գրանցման և (կամ) օգտագործման իրավունք տալու, ինչպես նաև երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման համար ստացված փաստաթղթերի համապատասխանության ստուգում օրենսդրությամբ սահմանված պահանջներին՝ դրանք որպես աշխարհագրական նշման, ծագման տեղանվան — երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման հայտ ընդունելու համար.

• գրանցել հայտերը և մուտքագրել հայտի տվյալների համապատասխանաբար ապրանքային նշանների հայտերի հիմնապաշար կամ աշխարհագրական նշումների հայտերի հիմնապաշար կամ ծագման տեղանունների հայտերի հիմնապաշար կամ երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերի հիմնապաշար.

• Օրենքով սահմանված ժամկետում անցկացնել ազգային ընթացակարգով ներկայացված ապրանքային նշանների հայտերի նախնական փորձաքննություն, ինչպես նաև աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների կամ երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման հայտերի փորձաքննություն.

• նախապատրաստել ազգային ընթացակարգով ներկայացված ապրանքային նշանների հայտերի նախնական փորձաքննության, ինչպես նաև աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման հայտերի փորձաքննության արդյունքների հիման վրա համապատասխան ծանուցումները կամ հայտը ըստ էության փորձաքննություն անցկացնելու մասին որոշումները.

• Նախապատրաստել ազգային ընթացակարգով ստացված ապրանքային նշանների հայտերը, ինչպես նաև աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և

երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերը հրապարակման նախապատրաստելու հետ կապված աշխատանքները,

• նպաստել օրենքով սահմանված ժամկետում ազգային ընթացակարգով ստացված ապրանքային նշանների հայտերի, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման հայտերի ըստ էության փորձաքննության իրականացմանը,

• նպաստել օրենքով սահմանված ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրոյի (այսուհետ՝ Միջազգային բյուրո) կողմից ստացված ծանուցումների ըստ էության փորձաքննության իրականացմանը,

• գրանցել Միության ապրանքային նշանների և Միության ապրանքների ծագման տեղանունների հայտերը,

• Նախապատրաստել օրենքով սահմանված ժամկետում Միության ապրանքային նշանների և Միության ապրանքի ծագման տեղանունների հայտերով նախնական փորձաքննության անցկացմանը և արդյունքների հիման վրա համապատասխան ծանուցումների կամ որոշումների նախագծերը,

• նպաստել օրենքով սահմանված ժամկետում Միության ապրանքային նշանների և Միության ապրանքների ծագման տեղանունների փորձաքննության իրականացմանը,

• Ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ իրավաբանական և ֆիզիկական անձանցից ստացված ապրանքային նշաններին, աշխարհագրական նշումներին, ծագման տեղանուններին և երաշխավորված ավանդական արտադրանքին վերաբերող դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկման, ինչպես նաև պատասխանների, պարզաբանումների տրամադրման վերաբերյալ

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաները՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ժամանակի կառավարում

2. Փաստաթղթերի նախապատրաստում
3. Ծառայությունների մատուցում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և (կամ) միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և (կամ) մասնագիտական օժանդակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և (կամ) միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և (կամ) մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: